


ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՒՅՆ ԴԵՄՔԸ

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ.



Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860-1932) հայագիտության ուրույն դեմքերից է: Նա ավելի քան կես դար բեղմնավոր գործունեություն է ծավալել հայ մտավոր մշակույթի մի շարք բնագավառներում՝ հանդես գալով որպես գրող, գրականագետ, հրապարակախոս և պատմաբան:

Բավական է թերթել XIX դ. վերջին երկու տասնամյակների և XX դարա-սկզբի կովկասահայ թերթերն ու ամսագրերը, թուուցիկ հայացք նետել ժամանակաշրջանի հայագիտական գրականությանը՝ համոզվելու համար, որ տակավին 18 տարեկանում ռուսական նարոդնիկական միջավայրում մեծ համարում ունեցող գերմանացի գրող Ֆրիդրիխ Շպիլհագենի «Մեկը դաշտում զինվոր չէ» նշանավոր վեպի կերպարներից մեկի Լեո անունը յուրացրած Առաքել Բաբախանյանը՝

որպես գրող, գրական քննադատ և հրապարակախոս, ժամանակի նշանավոր դեմքերից էր: Գնահատելով Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը՝ Ավ. Իսահակյանը գրել է. «Որպես գեղարվեստական գրող, Լեոյին անշուշտ չի կարելի դասել ռուսահայ գրականության արձակագիր կլասիկների շարքին՝ Բաժժիի, Պ. Պոռոյանի, Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի... սակայն իր պատվավոր տեղն ունի: Նրա վիպակները, օրինակի համար «Կորածները», «Պանդուխտը», «Այծարած Եղոն», «Թաթախման գիշերը» գեղեցիկ իրականացումներ են... միշտ հաճույքով կկարդացվեն: Այստեղ նրա ոճը կտրուկ է, աշխույժ և պատկերավոր, և ժողովրդական դարձվածքներով հարուստ»¹:

Արձագանքելով 1880-1890-ական թվականների հայ հասարակությանը հուզող հարցերին, Լեոն «Մշակ», «Արձագանք», «Աղբյուր», «Տարագ», «Արմենիա», «Մուրճ» և այլ պարբերականներում տպագրած տարբեր ժանրի գրվածքներում պատկերում էր գավառահայության, մասնավորապես գյուղացիության ծանր վիճակը, մերկացնում գյուղական ցեղերի շահատակությունները, արևմտահայության օրավուր վատթարացող կացությունը,

քարոզում

հայրենասի-

¹ Ավ. Իսահակյան, *Երկեր*, հ. 4, Ե., 1959, էջ 107:

րական ներգործող գաղափարներ, հանդես գալիս հետադեմ պահպանողական ուղղության գործիչների դեմ:

Լեոն է գրել ռուսահայ գրականության առաջին պատմությունը, ստեղծել գրական հոսանքների ամբողջական ուրվագծերը՝ ըստ պատմաշրջանների: Նա հայ և համաշխարհային գրականության շատ դեմքերի ստեղծագործություններ բացահայտեց նորովի, հայ գրականագիտական միտքը հարստացրեց նոր հասկացություններով և ըմբռնումներով: Նրա պայքարը գրական հետադիմական ուղղությունների դեմ պատկանում է հայ քննադատական-հրապարակախոսական մտքի արժեքների թվին: Լեոյի դիմադարձը գեղարվեստական գրականությունից և գրականագիտությունից դեպի հայ ժողովրդի հասարակական մտքի և քաղաքացիական պատմության ուսումնասիրման ասպարեզ՝ հիմնականում տեղի ունեցավ XIX դ. վերջին տասնամյակին: Լեոն՝ որպես պատմաբան, իր գործունեությունն սկսեց պատմական մի ժամանակաշրջանում, երբ սխոլաստիկայի հիմքով հասակ առած կղերապահպանողական պատմագրությունը նահանջում էր իր նախկին «ամուր» դիրքերից՝ տեղի տալով ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական ուղղություններին: Ընտրելով վերջին ուղղությունը՝ նա կարողացավ զգալիորեն առաջ անցնել ոչ միայն Մ. Էմինից և Մ. Գարագաշյանից, Ք. Պատկանյանից և Գր. Խալաթյանից, հայագետ Մխիթարյաններից, այլև Ստ. Պալասանյանից և Ալ. Երիցյանից:

Լեոյի գիտական ուղղությունը ռեալիզմն էր, համոզմունքը կամ դավանանքը՝ լիբերալիզմը: Նրա բոլոր մինչևտրհրդային գրվածքները չէին խոտորվում այն սկզբունքներից, որոնց պաշտպանն էր «Մշակ» թերթը: Լեոյի համար մարդկային հասարակության մեջ չկան հանկարծակի թռիչքներ, այլ ամեն ինչ, այդ թվում և ազգերը, բարձրանում, զարգանում են աստիճաններով: Չնայած Լեոյի գիտական բեմելի պահին հայ պատմագիտության ազգային-պահպանողական դպրոցը, կղերականի համեմատությամբ, նոր աստիճանի էր բարձրացրել պատմության ուսումնասիրությունը, բայց, այնուամենայնիվ, տառապում էր մեթոդաբանական և պատմամիմաստասիրական սահմանափակ հայեցողությամբ և չէր կարողանում պատմությունը դուրս բերել մտածողության իդեալիստական շրջանակներից: Տակավին 1880-ական թվականների վերջերին Լեոն դժգոհում էր, որ չկա ժողովրդի քաղաքացիական և ընկերային հարաբերությունների պատմությունը, որ հայոց պատմությունն առավելապես դիտվում է արտաքին պատերազմների և ներարշավ դեպքերի կապակցության մեջ: Նա համամիտ էր Րաֆֆու այն հարցադրմանը, թե «Մեր պատմության մեջ գրեթե մոռացված է ամբոխը: Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից և զինվորներից, Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում էր, որ յուր կյանքն ուներ, որ յուր տոները, հանդեսներն ու ցնծություններն ուներ, և որի հոգեկան ու բարոյական

հակումներն

արտահայտվում էին այս կամ այն հասարակական երևույթների մեջ: Մեր պատմությունը լուռ է այս բոլորի մասին»²:

Այս առումով Լեոն Բաֆֆու գաղափարակիցն էր, այն տարբերությամբ միայն, որ եթե մեծ գրողի համար առաջնայինը վիպականն էր, ապա Լեոյի մեջ իշխում էր պատմականը: Ասենք նաև, որ Լեոն այնքան էր մարսում պատմական վավերագրերը, որ երբեմն չէր վկայակոչում դրանք, այլ պատմում էր իբրև գրող: Պատմական փաստերի ու վավերագրերի գրողական ընկալումը և ժամանակագրական համապարփակ ընդգրկումը նրան հնարավորություն տվեցին հայոց պատմությունը դիտել որպես միասնական ամբողջություն: Լեոն նման չէր այն պատմաբաններին, որոնք պատմական անցքերը գնահատում են ժամանակագրական նեղ կտրվածքի անձուկ միջավայրում: Նրա միտքն ավելի խորն էր ակոսում ուսումնասիրվող երևույթի պատմական և հասարակական զարգացումների ենթահողը: Ուսումնասիրության այդ մեթոդի կիրառմամբ, Լեոն մի-անգամից քննության առարկա դարձրեց ամբողջ Հայաստանի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև հայ-ռուսական հարաբերությունները, Հայկական հարցն ու արևմտաեվրոպական դիվանագիտությունը, ընդամին, միատեսակ հետաքրքրություն հանդես բերելով ինչպես պատմական փաստերի, այնպես էլ դրանց շարժիչ գաղափարախոսության նկատմամբ: Փաստորեն, Հայաստանի պատմության մեջ չկա մի հիմնահարց, որին մոտեցած և իր խոսքն ասած չլինի հայ նոր պատմագիտության այդ ուրույն դեմքը: Հարթ ու անարգել նրա գրիչը հեղեղել է Հայաստանի պատմության ամենատարբեր սահմանները: Հայաստանի հին, միջնադարյան և նոր պատմության ամենահրատապ և կենսական խնդիրների, հարևան երկրների հետ զանազան առնչությունների, համաշխարհային տարբեր անցքերի՝ Լեոյի խորատես գնահատականները մեծ նշանակություն են ունեցել հայ պատմագիտության զարգացման համար, նկատելի ազդեցություն են գործել հայ հասարակագիտության բոլոր մարզերի վրա: Նա կարողացավ հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցած երևույթները քննության ենթարկել՝ սերտորեն առնչելով արդիականությանը:

Լեոյի գիտական գործունեությունը ինքնաբերաբար բաժանվել է երկու հիմնական ժամանակաշրջանի՝ մինչխորհրդային և խորհրդային: Մինչխորհրդային տարիներին մեծ պատմաբանը գրեց և հրատարակեց իր պատմագիտական աշխատությունների մեծ մասը, որոնց թվում՝ «Հայկական տպագրություն» (2 հատոր, Թիֆլիս, 1901-1902), «Ստեփանոս Նազարյանց» (2 հատոր, Թիֆլիս, 1902), «Հովսեփ կաթ. Արդության» (Թիֆլիս, 1902), «Գրիգոր Արծրունի» (3 հատոր, Թիֆլիս, 1902-1905), «Ս. Մաշտոց» (Թիֆլիս, 1904), «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի» (Թիֆլիս, 1914), «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» (Թիֆլիս, 1914), «Հայոց հարցի վավերագրերը» (Թիֆլիս 1915), «Հայոց պատմություն» եռահատոր աշխատությունը (Թիֆլիս,

² Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. 8, Ե., 1986, էջ 6:

1917-1920) և այլն: Լեոյի մինչխորհրդային պատմագիտական աշխատությունները զգալի թարմություն մտցրին ավանդական հայագիտության մեջ: Իրենց բովանդակության և մատուցման ձևով նրա աշխատությունները իսկապես նորություն էին և այդ պատճառով էլ հասկանալի ընդունելության արժանացան ընթերցող հասարակության կողմից: Թե՛ կենսագրական բնույթի և թե՛ պատմագիտական իր ուսումնասիրություններում Լեոն աշխատում էր հատկապես վերհանել հայ ազատագրական պայքարի վերջին դարերի մանրամասները: Նա առանձնապես բարձր է գնահատում հայերի ռուսական կողմնորոշումը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: «Ռուսաց գենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն,- գրել է նա,- այլև կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության միջև: Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ, բացի մտավոր և կուլտուրական առաջադիմությունից»³:

Դժվար չէ գտնել ծայրն այն կարմիր թելի, որ անցնում էր հայ լիբերալ-բուրժուական պատմագրության և հրապարակագրության բոլոր հյուսվածքների միջով՝ խաղաղ տնտեսական կյանք և մշակութային ոգորում: Հայ լիբերալների այս մտայնությունը մխրճվում էր այն իրադրության մեջ, որ առաջացել էր արևելահայ կյանքում ռուսական տիրապետության շնորհիվ: Հայ բնակչության աճն Անդրկովկասում բարձրացրել էր հայերի տեսակարար կշիռը: Հաստատված խաղաղությունը, կյանքի և գույքի համար ստեղծված անվտանգությունը, ռազմական և վարչական նպատակներին ծառայող պետական շինարարություններն ու մատակարարումները բարձրացրել էին հայ բուրժուազիայի եռանդուն գործունեությունը: Հայ լիբերալներին ուրախացնում էր, թե ինչպես ազգայնորեն համակենտրոնացող արևելահայությունը զարգացնում էր իր ազգային-մշակութային կյանքը, հասունանում բուրժուական զարգացման համապատասխան կյանքի ու գիտակցության համար: Ռուսաստանը, գրում է Լեոն, վերջ դրեց Անդրկովկասում իշխած պարսկա-թուրքական անիշխանությանը, տեղական ժողովուրդներին ընձեռեց անձի, գույքի, տնտեսական և մշակութային զարգացման հնարավորություն, նորանվաճ երկրամասի հայկական շրջանները Ռուսաստանի հետ միացան կանոնավոր ու անխափան ճանապարհներով: Լեոյի համար հայ ժողովրդի վերջին դարերի պատմության ուսումնասիրությունը չունեի մի այլ վեհ կոչում, քան ժողովրդի ազգային համախմբման կողմնորոշի դերը:

Ստ. Նազարյանի և Գր. Արծրունու նման Լեոն այն կարծիքն ուներ, որ ռուսական մշակույթը բարերար ներգործություն է ունեցել հայերի ազգային-մշակութային առաջընթացի վրա: Այս առումով ուշագրավ են Գր. Արծրունուն նվիրված նրա տողերը: «Կովկասը,- գրում է նա,- նրա (Գր. Արծրունու - Ս. Ն.) առջև ներկայացնում էր մի այսպիսի երևույթ: Ռուսաց տիրապետությունը հաստատել է քա-

³ Լեո, *Ստեփանոս Նազարյանց, հ. I, Թիֆլիս, 1902, էջ 3*:

դաքական խաղաղություն, երկիրը այլևս պատերազմի դաշտ չէ և նրա մեջ ապրող ազգերը միայն մի նպատակ, մի ձգտում պիտի ունենան՝ գնալ առաջադիմող մարդկության ետևից, յուրացնել եվրոպական լուսավորությունը, ապրել քաղաքակիրթ ազգերի կյանքով»⁴։ Այն, ինչ Լեոն վերագրում էր Գր. Արծրունուն, վերաբերում էր և իրեն։

Վրաստանի՝ Ռուսաստանին միացման 100-ամյակի առթիվ գրած հոդվածում նա առավել անսքող դրսևորեց քաղաքական կողմնորոշման իր լիբերալիզմը։ Ըստ Լեոյի, Ռուսաստանը ոչ թե օգուտի կամ շահի համար մտավ Վրաստան, այլ հանուն վրաց ժողովրդի «արդար» պաշտպանության, քանզի ինքը՝ Ալեքսանդր Առաջինը «անարդար» բան էր «համարում ուրիշ երկրներ յուրացնելը»⁵։ Նա մեծ գոհունակությամբ էր խոսում ռուսական տիրակալի՝ 1801 թ. սեպտեմբերի 12-ի հրովարտակի մասին։ «Կովկասը շատ տիրապետողներ էր տեսել,- գրում էր պատմաբանը,- բայց նրանցից ոչ ոք այդպիսի խոսքեր չէր արտասանել։ Տասնյակ դարերի ընթացքում այստեղ հաստատված էր արյունի, հափշտակությունների իրականությունը։ Տասնյակ դարերի ընթացքում այստեղ Ասիան էր բռնացած։ Ռուսաց կայսրի այս խոսքերը բոլորովին նոր էին, դեռ չլսված այս դժբախտ ու արյունաքամ կողմերում...»⁶։

Լեոն նույն մերձեցմամբ էլ գնահատում էր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և Նիկոլայ Առաջինի՝ 1828 թ. մարտի 21-ի «Հայկական մարզ» ստեղծելու վերաբերյալ հրամանագիրը։ Հարկավ, շատ ավելի լավ կլիներ, եթե իրականանային հայ ազգային-քաղաքական ազատ իշխանություն ունենալու ակնկալությունները, բայց ստեղծված նոր կացության պայմաններում «ազատվել պարսկական բարբարոս ռեժիմից առանց նույնիսկ պայմանների, այդ էլ հավասար չափով փափագելի էր հայության համար», քանզի Ռուսաստանը «հրավիրում էր իր նոր հպատակներին խաղաղ և հանգիստ զբաղվել կրթության, առաջադիմության և բարոյական վերածնության նպաստող գործերով»⁷։ Լեոն այնքան էր գունազարդում ռուսական տիրապետությունը և նրա առաջ բերած հետևանքները, որ երկրամասը միացնելուց հետո այնտեղ ռուսական պետական օրենքներ մտցնելու և վարչություն կազմակերպելու ուղղությամբ ցարիզմի ձեռնարկած իրոք առաջադիմական միջոցառումների կողքին, նույնքան կարևորություն էր տալիս Նիկոլայ Առաջինի՝ 1836 թ. մարտի 11-ի շնորհած «Հայ լուսավորչական հավատի հոգևոր գործերի կառավարման կանոնադրությանը» («Պոլոժենիե»)։

Մինչխորհրդային շրջանում ցարիզմի բոլոր ձեռնարկները (այդ թվում նաև «Պոլոժենիե») դրվատող Լեոն հետագայում, խորհրդային ժամանակաշրջանում վերանայեց իր տեսակետը՝ գտնելով, որ դա, ըստ էության մի փաստաթուղթ էր, որով ցարիզմը կամենում էր

⁴ Լեո, *Գրիգոր Արծրունի, հ. II, Թիֆլիս, 1903, էջ 248-249*։

⁵ Տե՛ս «Մուրճ», 1901, N 2։

⁶ Լեո, *Ստեփանոս Նազարյանց, հ. I, Թիֆլիս, 1902, էջ 2-3*։

⁷ Լեո, *Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 88*։

սահմանափակել պետականությունից զուրկ հայ ժողովրդի քաղաքական հարցերի տնօրեն եկեղեցու իրավունքները:

Արևելահայության կրոնական և կրթամշակութային հաստատությունների նկատմամբ ցարիզմի հալածական քաղաքականությունը ավելի ցցուն դարձավ 1880-ական թվականներից սկսած և մակընթացություններով ու տեղատվություններով շարունակվեց մինչև գրեթե նրա տապալումը: Լեոն ասում է «գրեթե», որովհետև ռուսական առաջին բուրժուական հեղափոխության հարվածների տակ այն փոքր-ինչ փոխեց իր թափը, ձևն ու ուղղությունը:

Լեոն ուսումնասիրել է արևմտահայության ծանր կացության պատճառները, եվրոպական դիվանագիտության մտամարգանքների առարկա Հայկական հարցը, կանխատեսել Թուրքիան մեծ տերությունների կցորդ դարձնելու մրցապայքարի արդյունքներով նրա հպատակ, հատկապես քրիստոնյա, ժողովուրդներին սպառնալիք էլ ավելի ահավոր հեռապատկերները: Արևելյան ճգնաժամին և Հայկական հարցին նվիրած իր ուսումնասիրություններում Լեոնին հաջողվել է պատմականության դիրքերից լուսաբանել միջազգային իրադրության, Թուրքիայի ներքին ու արտաքին կացության հանգուցային հիմնահարցերը, այն հիմնական դեպքերի ընթացքն ու դեմքերի գործողությունները, որոնք առավել են առնչվել արևմտահայության քաղաքական ճակատագրին, Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական գործողություններին:

Մեծ հետաքրքրությամբ են կարդացվում ներքին դրամատիզմով հագեցած Հայկական հարցի վերաբերյալ նրա «Հայոց հարցը», «Գլադստոն», «Հայոց հարցի վավերագրերը» աշխատությունները, տասնյակ հոդվածները, որտեղ ցույց է տրվում, որ մեծ տերությունները նպատակ էին հետամտում բոլոր միջոցներով կանխել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակների հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական և դիվանագիտական վերընթացը: Մեծ տերությունները ամեն կերպ խոչընդոտեցին Ռուսաստանի գործուն մասնակցությամբ արևմտահայության կացության փոփոխմանը: Վավերագրերի և գորեղ տրամաբանության լեզվով Լեոն այսօր էլ ընթերցողի առջև բացում է աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար գոտեմարտի բռնված եվրոպական տերությունների հանցավոր դիվանագիտության խարդավանքները Հայկական հարցում:

Ժամանակի քննությանն են դիմացել Լեոնի այն մտքերը, թե մեծ տերությունների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր Օսմանյան կայսրության գլխին մտրակը ճոճելու, նրա ներքին գործերին միջամտելու համար: Լեոն խոսում փաստերով բարձրացնում է վարագույրն այն խարդավանքների, որոնցով նույն այդ տերությունները 1894-1896 և 1915 թթ. արևմտահայությանը ոչ միայն չպաշտպանեցին թուրքական բարբարոսներից, այլև իրենք անմիջական մեղսակիցը դարձան հայկական ցեղասպանության իրականացման: Հարկավ, Լեոն ևս ունեցել է եվրոպական դիվանագիտության հայանպաստ խոստումները դյուրահավատորեն ընկալելու՝ հայ հասարակական մտքի նախորդ շատ ներկայացուցիչներին

ուղեկցած

թուլու-

թյունը: Այսպես, նա ավելորդ ներբողներ է շռայլել անգլիական լիբերալիզմի պարագլուխ «մեծ մարդասեր» Ուիլյամ Գլադստոնին:

«Տասնիններորդ դարում,- գրել է նա 1899 թ. «Գլադստոն» աշխատության մեջ,- համաշխարհային հռչակ ստացան շատ պետական գործիչներ, բայց դրանց մեջ միայն Գլադստոնն է, որ իր գործունեությամբ և դավանած սկզբունքներով վաստակեց մարդկության բարեկամի մեծ անունը: Նա ցույց տվեց ամբողջ աշխարհին, որ կարելի է լինել իր երկրի մարդ, իր կառավարության պաշտոնյա, նվիրվել իր երկրի բարօրության և միևնույն ժամանակ մնալ մարդասեր, տանջվածների պաշտպան, ազգերի եղբայրության հզոր ախոյան: Գլադստոնը հասավ փառքի գագաթնակետին, բայց միշտ մնաց ժողովրդական մարդ. քրիստոնեական գաղափարը ժամանակակից քաղաքական գործիչների շրջանում նրա պես մի անձնվեր զինվոր չի տվել»⁸: Թե ինչ արեց «տանջվածների պաշտպան» ու «ազգերի եղբայրության հզոր ախոյանը» Թուրքիայի ճիրաններում գալարվող արևմտահայության համար, Լեոն լռում էր: Լռում էր, որովհետև նա և 1890-ական թվականների նրա ժամանակակից սերունդը գիտեին միայն, որ Գլադստոնը եղել է Մեծ Բրիտանիայում հայանպաստ հանրային կարծիքի ստեղծման և Անգլո-հայկական ընկերության (1882 թ.) կազմակերպման նախաձեռնողներից, և նրան է պատկանում «Ծառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել մարդկությանը» թևավոր արտահայտությունը, բայց անգիտանում էին, որ անգլիական լիբերալիզմի պարագլուխը և 1868-1874, 1880-1885, 1886, 1892-1894 թվականներին Անգլիայի վարչապետը, միայն պաշտոնաթողության ժամանակ, ընդդիմության մեջ գտնվելիս է հանդես եկել, այսպես կոչված, հայանպաստ հայտարարություններով: Նա հայերին հիշել և Հայկական հարցն օգտագործել է որպես պահպանողականների դեմ քաղաքական քարոզչության միջոց, իսկ վարչապետի աթոռին նստելուց հետո շարունակել է նույն ծավալապաշտական քաղաքականությունը: Հատկանշական է, որ Հայկական հարցում պահպանողականներ Բիքոնսֆիլդի և Սոլսբերիի գլխավորած կառավարությունների քաղաքականության քննադատությամբ հանդես եկող Գլադստոնը, 1892-1894 թթ. կրկին վարչապետ դառնալով, ոչ մի լուրջ քայլ չձեռնարկեց հայկական կոտորածների մեկնարկին սուլթանական կառավարության վրա ներագդելու համար: Իրականում Գլադստոնը իր «հայասիրական» ելույթներով միայն բրիտանական հասարակական կարծիքն է նախապատրաստել կառավարության նվաճողական քաղաքականությունը դյուրացնելու համար: Հետագայում Լեոն վերանայեց պատմական ճշմարտությունից շեղված իր կարծիքը: Եթե «Գլադստոն» աշխատության մեջ նա չէր կարողացել խորքով բացահայտել Անգլիայի լիբերալ կուսակցության պարագլխի փարիսեցիական քաղաքականության էությունը՝ նրան համարելով Հայկական հարցի պաշտպան, ապա 1925 թ. հրատարակած «Անցյալից դրքում

Լեոն

գրեց,

թե

Գլադստոնի

քաղա-

⁸ Լեո, *Գլադստոն, Թիֆլիս, 1899, էջ 5-6*:

քականությունը «բացարձակ թշնամական և աղետաբեր էր հայ ժողովրդին»⁹:

Վերանայելով 1890-ական թվականների իր այդ կարծիքը՝ Լեոն հատկապես ընդգծում է, որ «1880-ական թվականների Գլադստոնի փորձը պետք է լավ խրատած լինեք հայկական երեխայությանը, պարզ ցույց տալով նրան, որ Անգլիան Անգլիա է և ոչ մի նշանակություն չունի, թե ով է այսօր նրա առաջին մարդը: Գլադստոն, Սոլսբերի, Բիկոնսֆիլդ, որոնք անուններ են փոփոխական, հեղհեղուկ, անկայուն: Անփոփոխը անգլիական արշինն է և նրա ծառա ու սպասավոր են ամենքը, անգամ «մարդասերները», մեծ լինեն նրանք, թե փոքր - միևնույնն է»¹⁰:

Հայկական հարցի նկատմամբ անգլիական քաղաքականության ողջ գործընթացի վերաբերյալ Լեոն ընդհանրացել է. «Բայց ոչինչ և ոչ մի բան չէր լուծվում: Լոնդոնը Լոնդոն էր մնում՝ համաշխարհային գիշատիչ բանկ, իսկ Մուշի դաշտը՝ լլկանքների, լացի ու աղետի դասական հայրենիք»¹¹:

Լեոն ցասումնալից արտահայտություններով և փաստերի տրամաբանությամբ մերկացրել է նաև մյուս մեծ տերությունների հակահայկական քաղաքականության ընթացքը: Անդրադառնալով Կ. Պոլսում հայկական կոտորածներին՝ պատմաբանը գրել է. «Կոտորածի մյուս օրը, երբ Կ. Պոլսի փողոցները դեռ կարմրած էին հայի արյունից, Վիլիելմ կայսրն Աբդուլ Համիդին ընծա էր ուղարկում իր պատկերը, զարդարված թանկագին քարերով»¹²: Միշտ չէ, սակայն, որ մեծ պատմաբանը կարողացավ հավատարիմ մնալ տակավին 1880-ական թթ. իր իսկ առաջ քաշած այն նշանաբանին, թե պատմաբանը պետք է ճանաչի ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը¹³: Խորհրդային ժամանակաշրջանում գրած մի շարք աշխատություններում Լեոն գաղափարաբանության որոշ հարցերում շեղվեց իր վերոհիշյալ ճշմարիտ նշանաբանից: Այլևայլ հարցերի շարքում նա վերանայեց նաև հայ ազատագրական պայքարի, հայերի ռուսական կողմնորոշման առանձին կողմերն ու առանձնահատկությունները: 1920-ական թթ. գերիշխող գաղափարական պարտադրանքի ներքո Լեոնի պատմահասարակագիտական մտածողության սահմանները երևույթների և իրողությունների գնահատման պատմականությունից հեռացան և հակվեցին դեպի սուբյեկտիվիստական պատմահայեցողություն¹⁴:

Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի մասին Երևանի պետական համալսարանում կարդացած դասախոսություններում, «Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ» (1934), «Թուրքահայ հեղափոխության գաղափարա-

⁹ Լեո, *Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 39*:

¹⁰ *Նույն տեղում, էջ 33*:

¹¹ *Նույն տեղում, էջ 40*:

¹² *Նույն տեղում, էջ 121*:

¹³ *Տե՛ս «Փորձ», 1883, N 19, էջ 118*:

¹⁴ **Ներսիսյան Մ.**, *Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Ե., 1982, էջ 262-263*:

բանությունը» (1934-1935) և այլ աշխատություններում Լեոն բացասական վերաբերմունք էր հանդես բերում հայերի ռուսական կողմնորոշման, հայ ազատագրական շարժման գաղափարաբանության և նրա գործիչների նկատմամբ:

Շրջանցելով XIX դ. երկրորդ կեսին ծավալված արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման սոցիալ-տնտեսական և քաղաքական հենքը՝ նա թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը որակեց որպես «ողբերգություն», իսկ պայքարի գաղափարախոսներին՝ «արկածախնդիրներ»¹⁵: Գտնելով, որ ցարական վարչակարգի պայմաններում «անկարելի էր պատշաճավոր խորությամբ ու խստությամբ քննադատորեն վերաբերվել դեպքերին ու գործիչներին», և որ միայն խորհրդային կարգերի ժամանակ է հնարավոր «անաչառ գիտական-քննադատական վերլուծումների» ենթարկել պատմությունը և այդ ճանապարհով հասնել «իսկապես արդար և ճշմարիտ խոսքի», Լեոն քննադատական իր խոսքն ուղղեց ամենից առաջ Կարապետ Եզյանին, որն ըստ նրա՝ «խնամքով» թաքցրել է և ոսկեզօծել «ցարական և հայ կղերական քաղաքականության մեղքերը»¹⁶:

Ինչ խոսք, Լեոն իրավացի էր, երբ մերժում էր ցարիզմին «ազատագրական միսիա» վերագրող ռուս պաշտոնական պատմագրության (Պոտտո, Դուբրովին և ուրիշներ) և վերջինիս համախոհ Եզյանի ընթացքը, մի ընթացք, որը գերազնահատում էր քրիստոնյաներին անհավատների լծից ազատելու ցարական խոստումների արժեքը, սքողում ռուսական առաջխաղացման բուն նպատակը:

Լեոն մեղադրում էր Եզյանին այն բանի համար, որ XIX դ. երկրորդ կեսի հայ մտավորականության հիմնահայացքների ստուգատեսի և քննադատական գրոհի պայմաններում, նա չզգաց այն կրակիծն ու արցունքները, որ նույն դարի 20-ական թվականների վերջում ուղեկցվում էին հայ զանգվածների խինդ ու ծիծաղով: Ճիշտ դիմակայելով Եզյանին՝ Լեոն սխալվում էր, սակայն, երբ բացարձակ մեղադրանք էր նետում Ռուսաստանին՝ չզատորոշելով Անդրկովկասը նվաճող ճորտատիրության ու վաճառականության շահախնդրությունների պաշտպան ցարիզմը ստրկացված քրիստոնյա ժողովուրդներին արևելյան բռնատիրություններից ազատագրող Ռուսաստանի առաջադիմական դերից: Հայ ազատագրական շարժման երախտավորներից մեկի՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մասին Եզյանի այն տողերը, թե նա «հաստատեց յուր ամբողջ հոտի գիտակցության մեջ այն գաղափարը, թե հայ ազգի ուղիղ հասկացած շահերը լիովին համակերպ են Ռուսաստանի շահերին և դրա բարձր կոչմանն Արևելքում...»¹⁷, Լեոն համարեց «ստրկական հպատակություն»¹⁸: Հայ ազատագրական շարժման անցանկալի հետևանքները,

¹⁵ Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 21:

¹⁶ Լեո, *Հայոց պատմություն*, նորագույն շրջան, մաս առաջին, Ե., 1926, էջ 130:

¹⁷ Լուսմա, 1904, N 6, էջ 42:

¹⁸ Լեո, *Հայոց պատմություն*, նորագույն շրջան, էջ 162:

ըստ Լեոյի, պետք է որոնել այն բանում, որ ռուսական «խարդախ» քաղաքականությանն ընդառաջում էր հայ կղերական «ստրկամիտ» դիվանագիտությունը:

«Դեռ հյուսիսի գործը չվերջացրած,- գրել է Լեոն,- ռուսական իմպերիալիզմը երեսը դարձնում էր դեպի հարավ, որպեսզի դեմ առ դեմ հանդիպի դեպի իրեն եկող հայ կղերական դիվանագիտության: Այս հանդիպումը մի պատահականություն չէր, անցողական մի երևույթ: Այս հաստատ հիմնավորված սկզբնավորություն էր դարավոր մի անփոփոխության, որ պիտի կլաներ հայ ժողովրդի կյանքն ամբողջովին, մինչև որ վերջանար 1915-1920-ի կատաստրոֆայով»¹⁹:

Լեոն «հլու հպատակ», «կույր գործիք» բառերով էր պիտակավորում հայ ազատագրական շարժման երախտավորներին: Եթե մինչխորհրդային շրջանի աշխատություններում նա բարձր էր գնահատում հայության պատմական ճակատագրում Ռուսաստանի խաղացած առաջադիմական դերը, իսկ հաճախ Կ. Եգյանից էլ առավել իդեալականացնում ռուսական տիրապետությունը, ապա խորհրդային ժամանակաշրջանում գրած գործերում ռուս-պարսկական պատերազմներին հայերի մասնակցությունը համարեց «ավելորդ նահատակություն», ազատագրական շարժման հանրաճանաչ գործիչ Ներսես Աշտարակեցուն՝ «լրտեսապետ»²⁰: Վերջին աշխատություններում հայերի ռուսական կողմնորոշման և Հայկական հարցի վերաբերյալ Լեոյի հայտնած բոլոր արտահայտությունների էությունը կարելի է բանաձևել այսպես՝ Ռուսական կայսրությունը չկատարեց հայերին տված իր խոստումները: Լեոյի մերկացումների առարկան և հարվածների ենթական ամենից առաջ և բոլորից շատ ցարիզմն է, վերջինիս երկդիմի քաղաքականությունը, սակայն պատմաբանն ավելի շատ մեղադրում, քան բացատրում ու բացահայտում էր ցարիզմի ու նրա բյուրոկրատիայի վարած երկդիմի քաղաքականության հիմքերն ու պատճառները:

Կյանքի վերջին տասնամյակում Լեոն պաշտպանեց տեսակետներ, որոնցում երբեմն-երբեմն պատմական իրադարձությունները և երեվույթները քննում էր ոչ թե այն կապակցությունների մեջ, որոնցում դրանք տեղի են ունեցել, այլ դրանց վրա մեխանիկորեն փոխադրում էր իրօրյա իշխող գաղափարաբանությամբ թելադրված գնահատականները և կատեգորիաները: Անցյալի երևույթների գնահատման համար նա գործածում էր այնպիսի դարձվածքներ և տերմիններ, որոնք բնորոշ էին պատմությունը մատերիալիստական դիրքերից գոեհկացնող մոդեռնիստներին: Այսպես, օրինակ՝ «Հին Հռոմի բուրժուազիա», «Կարբիի բուրժուազիա», «Հռոմեական գիշատիչ իմպերիալիզմ», «Տիգրանի ժամանակ Հայաստանը գտնվում էր ծաղկուն իմպերիալիզմի շրջանում» և այլն, և այլն:

Լեոն այնքան խտացրեց առևտրական կապիտալի գույները Հայաստանում, որ փորձեց հայ
հասարակական-քաղաքական
կյանքում

¹⁹ Լեո, *Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ*, Ե., 1934, էջ 218:

²⁰ Լեո, *Հայոց պատմություն*, նորագույն շրջան, էջ 200:

կատարված բոլոր երևույթները բացատրել առևտրական կապիտալի գրաված տեղով ու դերով: Առևտրական կապիտալը համարելով հայոց նոր պատմության շարժիչ ուժը՝ Լեոն XVI-XIX դդ. պատմությունը որակեց որպես խոջայական կապիտալի պատմություն: «Խոջայական կապիտալը,- գրել է նա,- հանդիսանում է այնքան մեծ, այնքան անգերակշռելի մի հասարակական ուժ, որ նրան է միայն վերապահվում իրենով լցնել հայոց պատմության ամբողջ նոր շրջանը»²¹, կամ՝ «այդ ուժն էլ դառնում է այն առանցքը, որի շուրջը պտտվում է հայոց ամբողջ պատմությունը 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ դարերի ընթացքում»²²:

Վերջին հրապարակումներում Լեոն ազգավնաս որակեց հայ կամավորական շարժումը, մեղադրական խոսքերով բնութագրեց ՀՅԴ-ի, Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության բռնած դիրքը, ինչպես 1912-1913 թթ., այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում: Մերժելով Թուրքիայի դեմ կամավորական շարժման կազմակերպման ուղղությամբ դաշնակցության գործունեությունը՝ Լեոն շեղվում էր ճշմարտությունից, երբ արևմտահայության բնաջնջման պատճառ էր համարում նաև նման գործելակարգը: «Այս հիմար անհասկացության առաջ է ահա,- ասում է Լեոն,- որ սոսկումով պիտի կանգ առնի պատմագիրը, երբ սկսի հետազոտել, թե ինչպես մոռթվեցին և ջնջվեցին մի միլիոնի չափ (Լեոյի ժամանակ գոհերի թիվը դեռ ճշտված չէր - Ս. Ն.) անգեն և անպաշտպան մարդիկ: Նրա զարմանքը պիտի բազմապատկվի, երբ տեսնի, որ մի փոքրիկ ու չնչին խումբ «ազգասերներ» էին միլիոնավոր բազմությունը ոճրապարտ թեթևամտությամբ, առանց պայմանի ու երաշխիքների, մատուցում իրենց «բարյացակամ» մողոքին, այդ փոխարքա կոմսին»²³ (այսինքն՝ Վորոնցով-Դաշկովին - Ս. Ն.): Լեոն հերքում է Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի և ռուսական դեսպանության առաջին քարտուղար Մանդելշտամի, գերմանացի լրագրող Հարի Շտուրմերի և հայ հեղինակների գրքերում տեղ գտած այն պնդումը, թե հայկական ապստամբություններ թուրքական զորքերի թիկունքում չեն եղել, թե այդ առասպելները թուրքերն են հնարել հայկական կոտորածները արդարացնելու համար: Վերոհիշյալ հեղինակները, չժխտելով այն, որ հայերը զենք են վերցրել թուրքական կառավարության դեմ, այդ արարքը որակում են ոչ թե ապստամբություն, այլ զինված ինքնապաշտպանական դիմադրություն:

Խիստ քննադատելով Հայկական հարցում Ռուսաստանի այդ ժամանակաշրջանի ռազմավարական ուղեգիծը՝ Լեոն հատկապես կանգ է առնում Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Յուդենիչի՝ փոխարքա Վորոնցով-Դաշկովին հղած զեկուցագրի վրա, որտեղ առաջարկվում էր պատերազմից հետո Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի հովիտներում բնակեցնել Դոնից և Կուբանից բերվելիք

²¹ Նույն տեղում, էջ 6:

²² Նույն տեղում, էջ 56:

²³ Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, էջ 121:

կազակներին, ստեղծել սահմանամերձ կազակություն: Լեոն շատ լավ գիտեր, որ իրադրությունից բխող նման առաջարկություններ եղել են նաև 1820-ական թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո, բայց դրանք իրական ընթացք չեն ստացել: Շատ լավ իմանալով նման առաջարկության անիրագործելիությունը՝ Լեոն այս անգամ ողբերգական լիցք է հաղորդում դրան, երբ գրում է, թե «իմպերիալիզմը տարածում է իր սուր ճանկերը այն ժողովրդի հողի վրա, որի հետ դաշնակից էր պատերազմ մղելու համար, կատարելապես գայլի և ոչխարի դաշնակցություն»²⁴: Նման փաստերի չափազանցման իր նոր մերձեցումով պատմաբանը խիստ քննադատում է արևմտահայ շարժումը՝ նրա կազմակերպիչներին անխնա համարելով արկածախնդիրներ և մարդասպաններ:

Գտնելով, որ արևմտահայ իրականության մեջ ազատագրական շարժումների համար իրական հող չի եղել՝ նա նույնիսկ 1862 թ. Զեյթունի ապստամբությունը համարեց «ինտելիգենտական մտածողության արգասիք» և առաջադրեց հռետորական հարց՝ «Իսկ ի՞նչ միտք ուներ ապստամբեցնել մի փոքրիկ, թեկուզ քաջարի լեռնային հայաբնակ գավառակ, որը շրջապատված էր թուրք, թուրքմեն, չերքեզ, քուրդ խաժամուժ ցեղերի մի ամբողջ ժողովրդով»²⁵: Լեոն կարծում էր, որ արևմտահայերն ընդհանրապես չպետք է շարժումներ սկսեին, չէ՞ որ ասիական Թուրքիայում հայերը կազմում էին բնակչության ամբողջ կազմի ընդամենը 38 տոկոսը, չէ՞ որ «38-ը երբ գնա 62-ի դեմ, միշտ կջարդվի»²⁶:

XIX դ. երկրորդ կեսի հայկական շարժումը, ըստ Լեոյի, արհեստականորեն ստեղծել է ռուսահայ մտավորականությունը՝ նարոդնիկական իր գաղափարաբանությամբ. «Ռուսական նարոդնիկական հեղափոխությունն էր, որ հայ ինտելիգենցիայի միջոցով սկիզբ դրեց թուրքահայ հեղափոխության»²⁷: (Անցողակի նշենք, որ արևմտահայ ազատագրական շարժումը և վերջինիս գաղափարախոսությունը դրսից ներմուծված լինելու վերաբերյալ Լեոյի հայեցակետը հիմնավոր հերքել է Աշ. Հովհաննիսյանը իր «Նալբանդյանը և նրա ժա-մանակը» աշխատության երկրորդ հատորի 585-589 փաստաշատ էջերում):

Վերանայելով Հայկական հարցի լուծումը Ռուսաստանի հետ կապելու իր իսկ դավանած գաղափարը, կյանքի վերջում Լեոն Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը՝ ռուսական զենքի ու դիվանագիտության հաղթանակի արգասիքը, համարեց արևմտահայերի համար մեծագույն «չարիք եւ ոճիր»: «Ինչո՞ւ» հարցին Լեոն պատասխանում էր՝ որովհետև «հայ ժողովուրդը Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածով ձեռք չէր բերում իր համար ոչինչ դրական, անվիճելի միջազգային իրավունք... այն մի ոճիր էր, որ բնաջնջող սրի տակ էր դնում ամբողջ հայ ժողովրդի կոկորդը... Ուրիշ անուն,

²⁴ Նույն տեղում, էջ 142:

²⁵ Նույն տեղում, էջ 28:

²⁶ Նույն տեղում, էջ 37:

²⁷ Նույն տեղում, էջ 27:

բացի մեծագույն չարիքից ու ոճիրից, չի կարելի տալ հայերի ստացած 16-րդ հոդվածին»²⁸:

Իրոք, Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չէր տրամադրում արևմտահայերին բաղձալի ազատությունը, բայց Լեոն անտեսում էր, որ, այնուամենայնիվ, 16-րդ հոդվածի կենսագործումով արևմտահայությունը ձեռք պիտի բերեր ներքին կյանքի բարենորոգումներ, թուրքական լուծը պիտի թոթափվեր, և Ռուսաստանին միացվեին հայրենիքի կենսական տարածքներ Կարսը, Արդահանն ու Բայազետը: Վերջապես, մի ժամանակաշրջան էր դա, երբ Աբդուլ Համիդը ձգտում էր անգամ աշխարհագրական քարտեզից ջնջել Հայաստան անունը, երբ մեծ վեզիր Քյամիլ փաշան գրում էր, թե պետք է ոչնչացնել կայսրության մեջ բնակվող ամբողջ հայությանը: Կյանքի վերջին շրջանում իմաստասեր պատմաբանն անցյալի իրադարձությունների և երևույթների շուրջ խորհում և հայ ազատագրական շարժման ընթացքը (մասնավորապես՝ արևմտահայ շարժման) վերաիմաստավորում էր ազգային պահպանողականության դիրքերից: Լեոյին նվիրված իր բացառիկ արժեքավոր հուշերում Ավ. Իսահակյանը ներկայացնում է այն ողբերգությունը, որ վերապրել է մեծ պատմաբանը հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարական-կազմակերպական գործընթացում իր և իր լիբերալ գաղափարակիցների թույլ տված սխալների պատճառով և բարձր գնահատում ազգային-պահպանողականների՝ ժամանակին իրենց կողմից մերժելի ուղեգիծը: «Մեծ պատերազմում հայ ժողովրդի կրած սարսափներն ու աղետները, գրել է Իսահակյանը, դառնությամբ լցրել էին նրա հոգին: Այդ անհնարին վշտի ծանրության տակ փշրվել էր նա:

- Հայության վիշտը ես միայն գերեզմանի մեջ կմոռանամ:

Բայց ո՞վ է մեղավորը, - ասում էր նա ինձ, - մենք ենք մեղավորը, մենք՝ մտավորականներս, գործիչներս, դու, ես և բոլոր նրանք: Մեր ժողովուրդը մեղավոր չէ: Այլ մենք, որ այնպես հիմար եղանք, տգետ, որ հավատացինք շահամոլ, դրամատիկական-բուրժուական Եվրոպային, որի համար գաղութների ոչխարների կյանքը ավելի արժեք ունեին, քան հայերը, քան փոքր, նվաճված ազգերը: Մենք, որ երեխաների պես հավատացինք լուսավոր մարդկության խղճմրտանքին, մարդկությանը, վաճառվող միջազգային մամուլին – բորենի, շնական դիպլոմատներին... Եվ կատաղում էր և բառ չէր գտնում որակելու...

Մենք, պոռոտախոսներս, մեծ խոսողներս, մենք, որ ստեղծեցինք և սնուցինք Դաշնակցությունը և Հնչակյանությունը, որոնց մեջ մարմնացավ հայ մտավորականների պոռոտախոսությունը, պարծենկոտությունը... Էս կոտրած ձեռքերովս ի՞նչ կռիվ եմ մղել մեր պահպանողականների դեմ, բայց պատմությունը ապացուցեց, որ Պետրոս Միմեռյանները, Աշըղյանները, Օրմանյանները իրավունք ունեին: Նրանք իրատես եղան, նրանք ճանաչում էին լիբերալ աշխարհը, նրանք գիտեին, որ մեծ պետությունները մեզ պիտի շահագոր-

²⁸ Նույն տեղում, էջ 78:

ծեն, վաճառեն և վերջը թքեն մեզ վրա...»²⁹։ Ավ. Իսահակյանը չի առարկում Լեոյի ոչ մի տեսակետին. ո՛չ ինքնաքննադատությանը, ո՛չ կուսակցությունների հասցեին ասված խիստ կշտամբանքներին, ոչ էլ պահպանողականների նկատմամբ համակրանքի ջերմ խոսքերին։ Հակված ենք կարծելու, որ ազգային-ազատագրական պայքարում թույլ տված սխալների՝ Լեոյի քննադատությունը ճիշտ է, բայց հետադարձ հայացքով պահպանողականներին անսխալական ներկայացնելը՝ չիմնավորված։

Անշուշտ, մենք հեռու ենք Լեոյի հայրենանվեր վաստակը գնա- հատելիս՝ պատմաբանի վերջին շեղումները բացարձակացնելուց։ Համոզված ենք, որ նույնիսկ եթե նրա մտավոր գործունեությունը 1920 թվականով ընդհատվեր, ապա, միննույն է, այսօր պիտի բարձրաձայնեինք, որ մինչխորհրդային ոչ մի հեղինակ այնքան ճշգրտությամբ չի բնութագրել բուրժուական Արևմուտքի եղկելի դերը հայ ժողովրդի, Հայկական հարցի նկատմամբ, որքան Լեոն։ Նա է համակողմանիորեն բացահայտել մեծ տերությունների հակահայկական քաղաքականությունը և այդ քաղաքականության ռազմավարական պատճառները։ Լեոն է Սան-Ստեֆանոյի պայմանագրի 61-րդ հոդվածը Բեռլինի դաշնագրի 16-րդ հոդվածի փոխակերպվելը համարել համաշխարհային դիվանագիտության նենգ գործարքներից մեկը, գործարք, որից հետո մեծ տերությունների մրցակցությունը, պատմաբանի արտահայտությամբ, այնպիսի կատաղի և անբարոյական կերպարանք ընդունեց, որ անկարելի դարձրեց նրանց միջև համաձայնության կայացումը Թուրքիայի վերաբերյալ որևէ հարցում։ Եթե մեկը սուլթանին վախեցնելու և նրանից շահավետ ձեռնարկներ կորզելու համար հայերին պաշտպան էր հանդիսանում, մյուսը գնում էր նույն սուլթանին հովանավորելու ընդդեմ այդ հայասեր պիտակով դիմակավորված ախոյանին՝ իր այդ պիտակը հնչուն դրամի վերածելու համար։

Ամփոփենք։ Լեոյի աշխարհայացքը բարդ էր ու հակասական։ Սակայն անգամ իրարամերժ տեսակետների և ըմբռնումների դրսևորումներում, տաղանդավոր գիտնականի նրա միտքը բացառիկ զգայուն էր իր ժողովրդի ճակատագրի հետ կապված ամենատարբեր կացությունները գնահատելիս։ Լեոյի հայագիտական բոլոր աշխատությունների առանցքը մեկն է. անցյալի էջերում, անցյալի փորձի մեջ որոնել Հայաստանի ազատագրության, հայ ժողովրդի ապահովության ուղիների բանալին։ Պատահական չէ, որ ինչքան էլ նա խտացներ ցարիզմի «խարդախ» քաղաքականության գույները, հարկադրված էր խոստովանելու, որ «եսամոլ և շահամոլ» ռուսական նվաճողականությունը, այնուամենայնիվ, «նման չէր նախընթացներին գեթ նրանով, որ անապատի ամայություն չէր բերում երկրներին և կոտորած ու ավերում՝ նրա բնակիչներին»։ Սա նշանակում է, որ Լեոն ուներ այն խոր գիտակցությունը, որ թեկուզ և ցարական ծանր ռեժիմի ներքո հայտնված՝ նվաճված երկրները ակամա ներգրավվելու էին

Ռուսաստանի

հզոր

շարժումների

մեջ՝

²⁹ Ավ. Իսահակյան, *Երկեր*, հ. IV, Ե., 1959, էջ 112-113։

հնարավորություն տալով հաղորդակցվելու եվրոպական մշակույթին³⁰: Հարկ ենք համարում միաժամանակ նշել, որ հայ նոր պատմագիտության և մշակույթի այդ մեծ երախտավորը բարձր գնահատեց հայոց բնօրրանի մի փոքր հատվածում խորհրդային կարգերի հաստատումը ոչ թե այն բանի համար, որ նա համակիր էր մարդկային հասարակության պատմությանը տակավին անհայտ կարգերին, այլ ամենից առաջ նրա համար, որ «խսպառ ոչնչանալու վտանգը կախված էր և արևելահայության վզից, եթե Անդրկովկասը խորհրդային իշխանության տակ չմտներ...»³¹: Այդպես էին մտածում ժամանակի բոլոր հայ մեծերը:

Լեոյի միտքը մի յուրօրինակ կամերտոն էր՝ զգայուն իր ժողովրդի ճակատագրի հետ առնչվող քաղաքական ամենատարբեր կացությունները գնահատելիս: Հարկավ, ժամանակը մերժել ու մերժելու է Լեոյի որոշ տեսակետները՝ տեղ բացելով նոր պայմանների թե- լադրած առաջնահերթ հիմնադրությունների առաջ: Սակայն նրա հայոց պատմության հատորները, բազմաթիվ մենագրությունները, հարյուրավոր գիտահրապարակախոսական հոդվածները կմնան սերունդներ հուզող ու դաստիարակող անանց արժեքներ: Լեոն պատկանում է հայագիտության այն դասականների շարքին, որոնց ժառանգությունը չի հնանում ժամանակի հոլովույթից, այլ յուրացվում, վերաիմաստավորվում և օգտագործվում է մտավոր նոր արժեքների արարման համար: Մրանում է հայագիտության ուրույն դեմքերից մեկի՝ Լեոյի ժառանգության արդիական խորհուրդը:

³⁰ Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, էջ 162:

³¹ Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, էջ 5: